ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՄԵՍՐՈՊ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մանուկյան,

ի պատասխան Ձեր 16.09.2024թ. հ.28/09 գրության՝ տեղեկացվում է.

Էրեբունի վարչական շրջանի Գլինկայի փողոցի հ.23/1 և հ.23/2 հասցեներում «ԲՐՈՔ ՍԵՐՎԻՍ» և «ՌՈՒՍԲԱՅՆ» ՍՊ ընկերություններին ոչ հիմնական շինությունների (կրպակաշարեր, վարչական մասնաշենք) տոնավաճառի կազմակերպման համար Երևանի քաղաքապետի կողմից 26.10.2023թ. տրամադրվել է հ.01/18-07/1-Դ-104916-758 նախագծման թույլտվությունը, որի տրամադրման հիմք է հանդիսացել ՀՀ Վճռաբեկ դատարանի 26.07.2023թ. հ.ԴԴԱ-1Ե-8950 /գործ ՎԴ/0301/05/22/: Նույն լիազոր մարմնի կողմից 04.06.2024թ. համաձայնեցվել է հ.01/18-03-432-24 աշխատաքային նախագիծը և կառուցապատող սուբյեկ հանդիսացող ընկերությանը 04.06.204թ տրվել է հ.01/18-02-975-24 շինարարության թույլտվությունը: 29.07.2024թ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության կողմից վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 157.15 հոդվածի 3-րդ մասի համաձայն կազմվել է հ.Ա-008156 արձանագրությունը, ինչպես նաև 18.09.2024թ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով կազմվել է հ.008811 արձանագրությունը: 17.09.2024թ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության աշխատակիցների կողմից Երևան քաղաքի Գլինկայի փողոց հ.23/1 և հ.23/2 հասցեներում հերթական տեղատեսության ժամանակ հայտնաբերվեց նոր իրավախախտման փաստ մասնավորապես՝ համաձայնեցված նախագծի պահանջներից դուրս իրականացվել էր քարե շարվածքով հենապատի կառուցման շինարարական աշխատանքներ, ինչպես նաև քարե շարվածքով պատերի կառուցման շինարարական աշխատանքներ: Վերը նկարագրված իրավախախտման փաստի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով իրավախախտող սուբյեկտ հանդիսացող «Բրոք Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր մարմնի ղեկավար քաղաքացի Դավիթ Քաջիկի Ահարոնյանի նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, որի

շրջանակներում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության կոմից ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարին գրություն է հասցեագրվել վերջինիս օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում՝ լրացուցիչ նախագծային ուսումնասիրություն կատարելու նպատակով:

Վերոնշյալ հասցեում շինարարական աշխատանքները դադարեցված են:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ